**ՏիրԱՆ.**— (Եւրոպական ձեռով խիս վայելուց հագուած կը մտնի ներս՝ ձեռքը լրացիր մը բոնած): Զարժանալի բան, Ամերիկեան եանքիները տարօրինակ են կ'ըսենք, մինչդեռ երբեմն մենք կը մրցինք անոնց տարօրինակութեան հետ, ահաւասիկ օրինակ մը (թերին վրային կը կարդայ) նանսիկ համտւարանէն վկայուած հայ օրիորդ մը Մազրիդիւղի մէջ կը սիրահարի յոյն նպարավաճառի աշկերտի մը, և գիշերանց լքելով իր ծնողքը սիրահարին հետ խօսք մէկ ըրած կը փախին անծանօթ ուղղութեամբ. կ'ըսուի թէ աղջիկը բաւանականաչափ դրամ տարած է հօրը տունէն (թերը կը ծաղիկ) բնաւ չպիտի զարժանամ եթէ օր մըն ալ իմանամ թէ հարուստ դրամատիրոջ մը աղջիկը ձկնավաճառի մը հետ ամուսնացեր է. (կը տեսնի Միրիկը որ ամբած է արտի մը վրայ) ներեցէք պարոն, մէկո՞ւն կ'սպասէիք արդեօք:

**ՏիրԻԿ.**— ... (Պատախան ցի տար եւ ապուշ կտրած երեսը կը նայի, սիշ սիշ):

**ՏիրԱՆ.**— Կը հաճի՞ք ըսել թէ ո՞վ էք դուք:

**ՏիրԻԿ.**— (Պաղ կերպով) Հաճի չեմ, սատէ Միրիկ է տառւնս:

**ՏիրԱՆ.**— Խնդիր չէ, բա՞ն մը կ'ուզէիք, փափա՞ք մը ունիք, կրնա՞մ արդեօք օգտակար ըլլալ ձեզ:

**ՏիրԻԿ.**— ... (Դեմքը կը ծամածուէ եւ գոենիկ դասակարգին յատուկ շարժուածեւր մը կ'ընէ):

**ՏիրԱՆ.**— Դրաւ կը դնեմ թէ բնակարանի գործին համար եկած էք:

**ՏիրԻԿ.**— (Զայրանալով) Միրսիւ, ազգ կ'ընես ամա, չինումաչինձա՞ կը խօրաթես չէ նէ մի ճարտնձա. մախսուս

կըսափառ լախըրտըներ կ'ընես կոր քի չնասկնամ տէյի, ես Սամաթիաին եալըն մեծցած եմ, քիւփիւրին անթիքան կ'ընեմ. պէրանս պանալ մի տար. պնական կործ կ'ըսես կոր նէ մէյէր չե՞մ հասկնար. ես ա կտորձուկ մը աըրպատուն կացած էմ հէլպէթ, պնական կորձը հարուր նումէոսին կ'ըսեն տէյի սորվեր եմ. պուտալա՞ կիտէիր դիմացինդ.

**ՏիրԱՆ.**— Բայց առ նուազն անկիրթ մըն ես:

**ՄիրԻԿ.**— Հաւկիթը դուն ես, հէմ ա սուլու հաւկիթ:

**ՏիրԱՆ.**— Այս, պարոն, իրաւունք ունիք, կրնաք նա-

խատել մէկը որուն տունը հիւր էք այսօր:

**ՄիրԻԿ.**— Ծօ' դուն տո՞ւն ա ունիս, աձլըգտան նէ հապէր. չորս չէյրէք տուր տէ մէծիտիէ մը տամ:

**ՏիրԱՆ.**— Աւելորդ կը համարիմ ձեղի հետ վիճիլ, որովհետեւ գիտեմ տգիտութեան ի՞նչ ըլլալը:

**ՄիրԻԿ.**— Ես ա քու ի՞նչ ըլլալը գիտեմ:

**ՏիրԱՆ.**— Ի՞նչ չափով գիտէք:

**ՄիրԻԿ.**— Քիլօէն պակաս:

**ՏիրԱՆ.**— Արդարեւ զուարձալի է այս մարդը:

**ՄիրԻԿ.**— Սրածալըն դուն ես:

**ՏիրԱՆ.**— (Կը խնդայ) Հա՛, հա՛, հա՛, իրաւ որ սրամիտ աղայ մըն ես, կը հաճի՞ք մեր ամուսնութեան օրը պատուել ձեր ներկայութեամբը և խնդացնել մեզ՝ ձեր միմոսութիւններովի ու սրամիտ կատակներովը:

**ՄիրԻԿ.**— Թի՞լէյի... առապ ըլլամ էյէր քի պան մը հասկցայ նէ:

**ՏիրԱՆ.**— Կը փափաքիմ որ հարսնիքիս օրը հոս գըտնըուիս:

**ՄիրԻԿ.**— Հարսնիքիս օրը... հա՛, հա՛, հա՛, հարսնի՞քիս օրը...

**ՏիրԱՆ.**— Ի՞նչ կայ ծիծաղելու,

**ՄիրԻԿ.**— Հարսնիքիս օրը... հա՛, հա՛, հա՛, (զօտիկն աղտու բաշկինակ մը կը համէ) առ սա եաղըլիսը տէ աշքերուդ արցունքը կը սրբես հարսնիքիս օրը:

### ՏԵՍԻԼ Զ.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԿԻՐԱԿՈՍ

**ԿիրԱԿՈՍ.**— Խաճ աղէն տուց էս թուղթ

Մուշու Միրիկ'կ (բուղը մը կ'երկարէ Միրիկին) ուեր առնասիսա տան խէօճաթ ի, խօնթռանթ ի, իրք ի, ենոր վրէն խաճ աղէն մօխուր գէրկեց:

Միրիկ.— (Ուրախանալով Կիրակոսին դրամական նույր մը կուտայ եւ անարզալից նայուածք մը կը ձգէ Տիրամի վրայ և եզնելու համար իր նակառակորդը, յանի որ ինը տարած կը կարծիր յաղրահակը), Մշնաք բարով, Հաճի աղալին ծառքերը կը պագնեմ: (Միրիկ կ'երթայ):

ՏիրԱՆ.— Կիրակու'ս, ո՞վ է այս մարդը:

ԿիրԱԿՈՒ.— Իսա միէր մօղախի ծար որ կը տեսնաս միէր խաճ աղի պղտիկ տուն կը նստեն, Կեաֆար տուտու կ'ասեն ենոր աղէն ի:

ՏիրԱՆ.— Ի՞նչ տեսակ մարդիկ են, ունեւո՞ր են:

ԿիրԱԿՈՒ.— Ես՝, կեասեն ուեր Կեաֆար տուտուի մօտ փող շատ կեայ. քիւֆի քիւֆի կեարմիր լիրա ունի կեասեն:

ՏիրԱՆ.— (Մեկուսի) Պէտք է զգուշանալ այս մարդէն, որովհետու յայտնի թշնամանանքով մը վիրաբերուեցաւ, հակառակ որ բնաւ անցեալ մ'ունեցած չեմ այս ձկնավաճաբն հետ:

### S E U R I. Է.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՏԵՐ ՍՄԲԱՏ

Տ. ՍՄԲԱՏ.— (Մտնելով) Ողջոյն ձեղ:

ՏիրԱՆ.— Օրհնեա տէր, հրամմեցէք Տէր Հայր,

Տ. ՍՄԲԱՏ.— Աստուտծ օրհնէ՛ Պարոն Տիրամո, կը յուսամ թէ ողջ առողջ էք:

ՏիրԱՆ.— Հանգիստ եմ Տէր հայր, շնորհակալ եմ:

Տ. ՍՄԲԱՏ.— Տունն է արդեօք Հաճի Վարդերես առան:

ՏիրԱՆ.— Եյո՛, Տէր Հայր, եթէ կ'ուզէք հիսայ թող սպասաւորը կանչէ:

Տ. ՍՄԲԱՏ.— Անշուշտ այո՛, տեսնուիլ կ'ուզեմ, և եթէ Կարելի է մեղ առանձին ձեցէք պահ մը (Կիրակոսին): Գնա՛ տղաս, Հաճի աղախն լուր տուր թէ կ'սպասեմ իրեն, կիրԱԿՈՒ.— Խիմի կեասեմ զիւզէ՛ (Կիրակոս կ'երթայ):

Տ. ՍՄԲԱՏ.— Այլևս ճամբու յոգնութիւնիդ առիք անշուշտ, ալ կամաց կամաց հարսնակին օրը որոշելու ենք:

ՏիրԱՆ.— Զեր և Հաճի աղախն մէջ ըլլալիք կարգադրութիւն մըն է ատիկայ:

### S E U R I. Բ.

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՀԱՃԻ ՎԱՐԴԵՐԵՍ ԱՂԱ

ՀԱՃԻ ԱՂԱ.— (Մտնելով) Օրհնէ ի տէր.

Տ. ՍՄԲԱՏ.— Աստուտծ օրհնէ Հաճի աղաս և իր օրհնեալ պարագաները, անփորձ և անխոռվ պահեսցէ (Տիրամ կը մեկնի):

ՀԱՃԻ ԱՂԱ.— Եթէ Տէրը կամեսցի, գաւ շաբթու հարսնիքը տի բռնինք, Տէր պապա՛:

Տ. ՍՄԲԱՏ.— Եյո՛, այլևս երկարաձգելու չենք, քանի որ ուշ կամ կանուխ պսակ մըն է պիտի կատարուի, բայց ես այսօր եկայ պսակը զոյտ ընելու խնդրին վրայ տեսնուելու համար:

ՀԱՃԻ ԱՂԱ.— Աս ջուխտ պսակը ի՞շ տիլի, Տէր պապա:

Տ. ՍՄԲԱՏ.— Այս պիտի ըլլայ որ խնայողութեան համար երկութիւ տեղ չորս գլուխ պիտի պսակենք, ես զիտեմ, Ակնցիները հաշուադէտ մարդիկ են. կը սիրեն քիչ ծախքով շատ գործ տեսնել:

ՀԱՃԻ ԱՂԱ.— Շիտակ է ըմա միքքդ չի հասկցայ:

Տ. ՍՄԲԱՏ.— Անցեալ օր Գոհար տուտուին բան մը խոստացեր ես, խեղճը ամբողջ ունեցածը գողցուցեր է. անառակ զաւակը մնտուկին մէջէն յափշտակեր տարեր է բուլոր դրամները, մինչդեռ ձեզի դրախոմայ տալու խօսք տըւած է եղեր՝ պայմանաւ որ ամսւանանաք հետը. այդ մասին մէջերնիդ համաձայնութիւն զոյցած է եղեր:

ՀԱՃԻ ԱՂԱ.— Ան օրը անենկ եարէնկութիւն մին էր արանք՝ ըմա ես հըմայեկըս միքքս փոխեր իմ:

Տ. ՍՄԲԱՏ.— Ներեցէք որ լինցնեմ խօսքս, Գոհար Տուտուն ինքն ալ աղէկ գիտէ թէ առանց դրամի չպիտի առնէք զինքը, և այդ բանին համար երեք օր է որ ոչ հաց կ'ուտէ և ոչ ալ ջուր կը խմէ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Կ'երպայ քի հացի տեղ բախւավայ կ'ու-  
տէ ու ջուրի տեղ ալ գինի կու խմէ :

Տ. ՍՄԲԱ.Տ. — Յորդարե յուսահատութիւնը պատեր է  
զինքը, և եթէ Հաճի աղան չառնեմ՝ ինքզինքս ծովը պիտի  
ձգեմ, կ'ըսէ. բնաւ ներելի չէ օրհնած, որ տիսուր բան մ'ը-  
լայ ձեր պատճառովը, դուք աստուածավախ մարդ էք եւ  
չք փափաքիր կարծեմ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Ի՞նչ ըսել կ'ուզես Տէրուէ՛ր,

Տ. ՍՄԲԱ.Տ. — Էսել կ'ուզեմ թէ Գոհար տուտուն ձեզ  
շատ կը սիրէ և դուք խօսք տուած էք առնելու, հետեա-  
բար պիտի խնդրէի որ խօսքերնիդ յարդէիք :

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Խօս տվաւ քի հարուր լիրա թրալօխմա  
տի տամ. ան քի ինք խօսքէն դասցաւ իսէ ես ալ իմ խօս-  
քէս դառձայ:

Տ. ՍՄԲԱ.Տ. — Բայց անիկա ձեզ իր բոլոր հոգւովը կը  
սիրէ և պատրաստ է ուրիշ զոհողութիւն մ'ընելու :

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — (Հետայրդրուելով) Ի՞նչ...

Տ. ՍՄԲԱ.Տ. — Ալթը Մէրմէրի կողմը արսա մը ունի որ  
հարիւր կարմիր ոսկիէն ալ աւելի կ'արժէ. իր այդ գետինը  
ձեր վրան պիտի ընէ. Քեզի նպաստաւոր է, չէ՛ մի ըսեր  
Հաճի աղա, Գոհար տուտուն իմ ծուխս է, տնաշէն կնիկ է  
և պատուախնդիր՝ հակառակ ձկնավաճառի մը մայրը ըլլալուն:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Քանի քի դիւն ինծի միւթմէյին կ'ա-  
նես նը բան մի կ'ըսինք, ըմա նէ Միրիկը տի դիննայ աս  
բանը նէ ալ պաշխասին, աս խօսքերնիս մեր մէջ տի մնայ,  
վաղուընէ թէզը չի կայ, արսան վրաս կու դառցնէ ու գալ  
կիրակի ալ աղընիս ու փեսիս հարսնիքին օրը իրեն խա-  
պար կու խրկիմ կուզայ ու Աստծու կամքը տեղը առնել  
կմւտանք, բարով չիւմը:

Տ. ՍՄԲԱ.Տ. — Շատ լաւ, մնացիք խաղաղութեամբ (Տ.  
Միրա կ'երբայ):

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — (Առանձին) Եֆէնտիմ. զատէկէն մարզը  
պաշխա է, խօս մի կայ կ'ըսեն. «Մինէք բէքմէղնիի թա-  
նը», վէլ հասրէ արժեքաւոր մարդ իմ, չի նայի՞ս, դոսս ու  
երթիքս կու քրքրին. տղան կ'ըսէ քի փարա տամ աղջինկըդ  
ինծի տիւր, մարն ալ անդիէն կ'ըսէ քի փարա կուտամ

սիրտդ տիւր ինծի. հըմայեկըս կարմիր լիրաներուն սիրուն  
հըմար երկուքին ալ խօս տվանք. խօս տվանք ըմա բանն  
ան է ուր ասոր տակէն ելլելիւ ինք. (Վայրկեան մը խորհիկէ  
վերց) նիհայէթ սըվոնց պէքք է ուր ես անուշէիկ ֆուլտախ  
մի՛ Ակնցու ըողիկ մի դասցնիմ, ու բարով մի զիշիններ-  
նուն մէջը եւրէշտիրմիշ անիմ. երթան պարիմէ հասկնան  
քի իշխատար Ակնցիին անիւնը փարան պաշտող ելեր է ըմա  
մարդկութիւնն ու բարեգործութիւնը տըհա եվէլ կու սի-  
րինք. Երթամ պարիւն Տիրանը տեսնիմ ու ասոր վրայօք  
միւշավէրէ մի անինք. (Ըի խանի խայլ կ'առնէ դեպի դուռը.  
Տիրան կը դիմաւորէ զինլիվ): Ես ալ քեզ տեսնել կ'ուզէի պա-  
րիւն Տիրան:

ՏիրԱՆ. — Հրաման ըրէ՛ք Հայր:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Քեզի բան մի տի ըսիմ ըմա...

ՏիրԱՆ. — Հրամմեցէ՛ք,

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Աղջինկս Պայծառը Աստծու իզնովը քեզի  
նշաներ եյի. հըմայեկըս նշանածդ չիփթէ խավոււլմիշ եղաւ:

ՏիրԱՆ. — Զեմ հասկնար ի՞նչ կ'ըսէք:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Էսելս ան է իւր խաթ մը տըհա նշանեցի:

ՏիրԱՆ. — Հանելուկ է այդ ըսածնիդ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Էսել կ'ուզիմ քեզմէ իզատ պաշխա մէ-  
կու մին ալ խօս տվի, վու հաթթա պաշլիմն ալ փէշին առի:

ՏիրԱՆ. — (Մեկուսի) Աստծուած իմ, ի՞նչ տարօրինակ  
մարդոց հնա է գործերնիս. (Քարձար) բայց Հաճի աղա, միթէ  
կարելի՞ է ըսածնիդ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Եյ իշ կայ քի, աղջինկս նշանած մ'եւել  
ունենայ նէ աշկը կ'ելլէ:

ՏիրԱՆ. — Ի՞նչ անհեթեթութիւն, արդեօք երա՞զ կը  
տեսնեմ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Աղջինկս տէ՛էր ունի, վազը մէկ երկու  
նշանած տըհա ելլէնը անիւնց ալ խօս տի տամ. «Փարայի  
վէրէն տիւտիկի չալար».

ՏիրԱՆ. — Եւ քանի որ ես զրամ չեմ տար, ուրեմն ա-  
ւելորդ եմ:

ՀԱՃԻ Ա.Ղ.Ա. — Զէ՛ օղոււ, չես հասկնար միքըս, աղ-  
ընիս ասըւ նշանածը դիւն ես. մէկալը երեւթի է. հէր իւ

խըտար վուսումնականութիւն չունիմ իսէ, վուսումնական մարդը երկու աշկիս պըլպըլիւկն է. ես քենէ չիմ օսնիր, աղջնկս քնզի հետ տի պսակիմ: մէկա հէրիֆին ալ պաշխայ աղջի մի գլոխը կու փաթթինք վէսսէլամ. ըառ բարով չիլիր. իրեն տված փարախն խուսուշին տասը փարան իրեն հարսնիքին մասրուֆ կ'անինք, ասոր կ'ըսին հէմ «փիւափ եազլանուր հէմ շամտան փաթլանուր»: Ասկին եէթիմ-ները կարգելով արա տեղը մեծ վարձք մինալ առած կ'ուլ-լինք,

ՏիրԱՆ.—Հիմա հասկցայ, բայց ո՞վ է այդ երկրորդ անձը կրնա՞մ ճանչնալ:

ՀԱՅԻ ԱՂԱ. — Հիմակ չիմ ըսեր, հարսնիքին օրը տի տեսնես (գրպանին կը հանի դրամով լեցուն բակ մը) առ սա իցցուն հատ լիրան ու հարսնիքին թէտէրիւքները տե՛ս. փարան հիշ էսիրկէմիշ չի տի անիս, էսէջնիւս կիրէկին հարսնիքը տի բոնինք, ես կ'ուզիմ քի փառլա՛խ, թանթանալու զոնթուլո՛ւ, տէպտէպէլիւ հարսնիք մի անինք. անթերի Ակին հարսնիք մի. սա ալ ըսիմ ուր Ասկը չէնցընելիւ համար հարսնիքնիւս օրը մէկ տիւնի մէջ վեց գլոխ տի պսակինք՝ գիցցած լընիս:

ՏիրԱՆ.— Նորէն հանելո՛ւկ. ինչ և իցէ. շա՛տ լաւ, հայր: Հայկական փառաւոր հարսնիք մը ընելու համար պիտի ջանամ կարելին ի գործ դնել:

ՀԱՅԻ ԱՂԱ. — Հայկական փառլախ հարսնիքին տուուը թող մեր հայ աղըըրտոցը ու քուրերուն շեն օճախը լընի՝ մեծ Հայաստանի մեծ հարսնիքին եքքը:

ՏիրԱՆ.— Կեցցէ Հայն և Հայաստանցին, կեցցէ՛ Հայաստանի մեծ հարսնիքը...

ՀԱՅԻ ԱՂԱ. — Առաջ մեր հարսնիքը, եքքն ալ ամէնուն հարսնիքը:

(Պարագոյրը կ'իշնայ)

ՎԵՐՁ Բ. ԱՐԱՐՈՒՄԾԻՆ

## ԱՐԱՐՈՒՄԾ Գ.

Տեսարանն է հանի Վարդերես ալաի տան հիւրանոցը՝ գաւառական ոճով զարդարուած. հարսանեկան սեղան մը զրուած է մէջտեղը. սպասուի Մարիամ սպասաւոր Կիրակոս եւ Կողմող ազբար Կովասաւորեն, սեղանը կը յարդարեն, ըմպելիներ, գաւաթներ ու պնակներ կը շարեն սեղանին վրայ՝ կը մտնեն ու կ'ելլեն:

ՏԵՍԻԼ Ա.

### ԿԻՐԱԿՈՍ, ԿՈԶՄՈԶ ԵՒ ՄԱՐԻԱՄ

ԿԻՐԱԿՈՍ. — Տօ՛, իսա խարսնիք միէզ խամար տըժոխը ի. մէկըմ կը վազինս վիե՛ր, մէկըմ կը վազինս վար, կըզ-մէիթ խա՛, կըզմէիթ խա՛... չարեէք սախաթ խանքիսթ չի քեայ:

ԿՈԶՄՈԶ. — Շիտտակը ես ալ թիրիթ էղայ, քչիս մի ըռէէթ անինք, չլլի՞ր: (Կը նսինի)

ԿԻՐԱԿՈՍ. — Վալլա քի մի պան ասե՞մ, Գոզմոզ ախ-պէ՛ր, իսա խարսնիքի տավաթլինիեր ժամ կացան ուեր մուշու Տիրանի վու Բայձասի պատըմ թամաշա ենին, միէր դրացիներուց Կաֆար տուտուն ու տղէն Միրիկն էլ խարսնիքի տավաթլի արացին, ամա ենոնք ուեր տավաթ արացինք խաճ աղէն ասեց ուեր սախաթ խինկին խարսնիքի տուն գան. պսակըմ ուեր ասես սախաթ երեքից թամամ կենի. իսա տիէզ սէպէպըմ կայ ամա չիէմ խասկանայ:

ԿՈԶՄՈԶ. — Գոզտիւկ բան մի կու դառնայ ըմա չի կիտիմ. պէլքիմ Մայամը աս ինչուկինն է նը գիտէ:

ՄԱՐԻԱՆ. — (Պարհիզակիի արտասանուրիւնով) Ես ի՞նչ գիտի՞մ. քէնեա չիմ օղո՞ւլ... ամա Գոհար տուտուն Հաճի աղախն հետ մուհապէթը տիւզմիւշ ըրեր է՛...

ԿԻՐԱԿՈՍ. — Մինակ Կաֆար տուտուն չի՛, Միրիկն էլ խաճ աղի խիետ խօրօս ի:

**ԿՈՉՄՈԶ.** — Ե հա՛ անենկ է, ես փօս եյի ուր օնցել օր Միրիկը եկաւ ու երկու սահաթի մը խտար մինայնին խօ-  
րաթեցին:

**ԿԻՐԱԿՈՍ.** — Եա՛, ես էլ տեսայ ուեր Միրիկը խաճ աղի խետ կաֆա կաֆաի սէօնպէթ արեցին, խիմ էլ կեարմիր ոսկու ձանըմ գիւղէր սենեկի միջից, դիւ էլ վօսկու ձան առեցի՞ր Մարօ՛:

**ՄԱՐԻԱՄ.** — Ես տա չխիմ ըմա՛... դուռին ետեւէն լսեցի որ տէրտէր պապան երկու հարսնիքը մէկտեղ բռնինք կ'ըսէ՛ր:

**ԿՈՉՄՈԶ.** — Պէլքի տէ իրեք հարսնիք, չիւնքիմ գոր-  
ծին թութուշը տաենկ կու ցցնէ:

**ԿԻՐԱԿՈՍ.** — Վալլա իսա փէք խօշ խարսնիքըմ կ'ըւնի.  
եթ կ'ասեմ ուեր քիւլահըմ կայ իսա տիէզ. տեսնիէնք որի՞  
կըլիին կը խագցուցին:

**ԿՈՉՄՈԶ.** — Խնչէրնուս պէ՛քք, կիրակոս աղբար, իշ  
կ'ուլի թող լընի, մենք քեֆերնիս նայինք. կոպիս հարս-  
նիք է:

**ԿԻՐԱԿՈՍ.** — Խարսնիեւորներ տախա իւշ գիւղէն. եկե  
տո՛, իսա տիէզ սկամպիլըմ տառցուցինք. եթմ կըրպանի  
միջջ խաղի թուղթըմ կայ:

**ԿՈՉՄՈԶ.** — Բարսվ ըմա թէք պիթմիշ մի կու խաղամ:  
**ԿԻՐԱԿՈՍ.** — Խօրօս կ'ենի (գրապանէն խաղի թուղթը կը  
հանէ որ ծաղապահի նստած կը խաղան, իսկ Մարիամ դուրս  
կ'երթայ այդ միջոցին):

**ԿՈՉՄՈԶ.** — Մանչո՛ւկ, տա խըզը պէկիս տիւր նայիմ:  
**ԿԻՐԱԿՈՍ.** — Միեր երկրայ պէկեր աղջիկ չաա տարան  
էլ չիէմ ի տայ. եէնոնց կըշտին եռամբուխըմ կը խփեմ չուեր  
տըժոխքի ճամբան կը բռնիեն. էսի կօզ է, քէօ պէկը խապը  
կլեց.

**ԿՈՉՄՈԶ.** — Հատի նայինք սա թալսլիիս իշշ տիտան:  
**ԿԻՐԱԿՈՍ.** — Խտա խաճ աղաին էլ կաֆար տուտուն  
կը տամ, խալալ թող ըլնի... Տօ՛, դիւ ի՞նչ կեասեռ տօ՛,  
կուփաի ծերուկ վաղուց հանուաւ, դիւ իսա թղթերաց մէ-  
ջն կողացար. տօ՛, վանեցին կըմպըլ է ուեր խարես, խա՞:

**ԿՈՉՄՈԶ.** — Խըմպըլ չես տէ ի՞շ ճիվերս ես,

**ԿԻՐԱԿՈՍ.** — Դիւ ես կըմպըլ. (ու երտու զաւասացի  
աղբարիկները կը փարրուին մէկզմէկու, չկ թէ համբուրուե-  
ցով այլ կըզուրտելով: Նոյն պահուն ներ կը մէնն Գոհար  
տուտուն):

### ՏԵՍՆՔ ԵՒ ԳՈՀԱՐ ՏՈՒՏՈՒ

(Փոհար կը մէնն ծիծաղիկ լղալու ասիհան պհնազար-  
դուած, խոշոր ու սէկ օղեր կախուած են երկու ականջնե-  
րէն, ձեռքի ուրը մատներէն մատանինիր անցուած են. հազած  
է բաց զոյն սեղուսէ շրջազգես մը եւ վրային դարձեալ բաց  
գոյնով մուշտակ մը, մազերը ինեանով անմրուած են:

**ԳՈՀԱՐ.** — Հէմէն երկու աչքերնիդ քէօննայ. որվօնց  
փաթըստըն նայէ՛. քա մեղայ, չեն ալ ամնար. ասանկ օ-  
րով խըզմէթնին ձգեր թուղթ կը խաղան կոր. հայտէ նայիմ  
դուրս ելէք սըկէ՛, սըյըլիներ,

**ԿՈՉՄՈԶ.** — Սըյըլսը դիւն ես. սա նայէ հըլա, դիւն  
վէ՛վ ես ուր մեզ կու չէխես, կու նայիմս, «տաղտաքի կէլ-  
միշ պաղտաքի խօվար»: ըսէ նայիմ իշշ կու խառնըվիս դիւն:

**ԳՈՀԱՐ.** — Ես չեմ խառնուիր տէ ո՞վ կը խառնուիր.  
հիմանուկ ես աս տունին հանըմն եմ, չիւնքիմ ասօրուընէ  
անդին համի աղան իմին ամուսինս է, կը հասկնա՞ք կոր:

**ԿՈՉՄՈԶ.** — (Խնդարով) Հա՛, հա՛. հա՛... հըլա՞ իրաւ  
ըսիր ձուհար ապըլա, ափ կ'անհս չէյանք գիտեր, հա՛, հա՛,  
հա՛, հա՛, հա՛, հա՛:

**ԿԻՐԱԿՈՍ.** — Խանո՛ւմ, խըլա ասա՞ , խաճ աղէն ուեր  
վագքթ առացեր ուեր միէնք չկիտեցանք, խըլա՞:

**ԳՈՀԱՐ.** — Թեօ՞ս է աչքերնիդ . չէ՞ք տեսներ կոր հարս-  
նիքին սուփուան, անմենական աս թէրթիպը . մերին հարս-  
նիքին համար է:

**ԿՈՉՄՈԶ.** — Զերին հարսնիքին մի... հա՛, հա՛, հա՛,  
ձուհար առատուին հարսնիքին հըմար է եղեր աս թանթա-  
նան ու չանթանան, հա՛, հա՛, հա՛:

**ԳՈՀԱՐ.** — Ընծի նայեցէ՞ք, ես ձերին մասխարան, ձե-

բին էլլէսէն չեմ, ինչ կը խնդաք կոր հա՛, հա՛, հա՛, առ  
տեղ խնդալու պան մը կա՞յ քի, հաճի աղան ինծի առնելու  
վատ ըրած էր, ու ասօրուան համար խապար խաւրած էր.  
ձեզի կըսեմ կոր քի աս հարսնիքը ընծի համար է:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՄԻՐԻԿ

(Միրիկ իր դասակարգին յատուկ հարսանելան հագուստով)

Միրիկ (Մամեդով).— Առւտ է, սուտ է ճատըն, աս հարս-  
նիքը թէքսիլ ընծի համար է:

ԳՈՂԱԲ. — Դուն ճղակտոր ելլաս հէմէն գող շո՛ւն, ան-  
խտար կարմիր ոսկիներուս վրան նստար. հիմակ ալ հաճի  
աղախն աղջիկը առնելու ելեր ես, կըրողս քեզի աղջիկ  
կուտան. հաճի աղան քի ինծի առաւ նէ ալ դուն կտործուկ  
մը հավայ առ, իշխէ քու, աչքովդ կը տեսնաս կոր քիս  
հարսնիքը պըռներ ենք: (Կողմուկ եւ կիրակու երկու վիճով-  
ներուն եւեւը անցած մինոսուրիւմներ կ'ընեն՝ մինչկատակնե-  
րու պկա):

Միրիկ.— Խենթեցա՞ր դուն քա՛, քուկին փարադ  
ո՞ւրկէ է քի հաճի աղան քեզ առնելու ելլէ, անիկակ փա-  
րասըզ կնիկ չառներ:

ԳՈՂԱԲ.— Խռատներս, առսաներս օղլ ըլլան. չունի՞մ  
տէյի կիաէիր զահէր, հէմ տուի, հէմ ալ հաճի աղան ինծի  
ամուսին առի, տէ զնա տէ փաթլամիլ եղիր հէմէն. թէք-  
սիլ աս հարսնիքը ընծի համար է:

Միրիկ.— Հա եա՛, հաճի աղան ալ քուկին ընքուընե-  
րուդ ըսաստըխին մայիլ էր տէ առնէ պըռոր քեզի. տուն  
ընծի նայէ՛ ընծի, հաճի աղան Պայծառը վարժապետէն ետ  
ըրած է տէ ընծի խապար խրկած էր քի հոս գամ տէ  
ասօր պսակուինք տէյի. իշտէ աս կիշեր ես կարգուիմ պիտի  
տէ քեզի ճախայ ընեմ պիտոր, անկից սոռզամ տուն օրթան  
մնաս պիտօս, քէօս տչքովդ կը տեսնաս կոր քի հարսնիքը  
պըռնուած է:

ԳՈՂԱԲ.— Հարսնիքը պոնուած է նէ ընծի համար պըռ-  
նըրուած է.

Միրիկ.— Դուն հողերուն հետ կարգուիս պիտօր. առ  
հարսնիքը ընծի համար է:

ԳՈՂԱԲ.— Տէրտէրները կարգդ կատարեն հեմէն աէ չի  
հասնիս ատ օրին, աս հարսնիքը ընծի համար է:

Միրիկ.— Իշխէ փաթլա՛ չաթլա՛, ընծի համար է:

ԳՈՂԱԲ.— Ընծի համար է:

Միրիկ.— Ընծի համար է: (Ծոխը աստիշորին կը շարու-  
նակուի: Եւյն պահուն դրսին ձախներ կը լուսին, հարամելան  
րախօրը եկեղեցին կը վերադառնայ, ըստ Ակնիցիներու սովորութան  
ու Առաջուրեամբ):

ԿՈՂԱԲՈԶ.— Հարսնեւորները կուգան:

ԿԻՐԱԿԻՐՍ.— Խարսն ու փեսան ժամէն զիւզէ ն:

(Դրսին նուազածուրիւնը կը շարունակուի, Գոհար եւ Մի-  
րիկ կոյսինին կը դադրեցնեն եւ ապուշ կտրած իրարու կ'ային:)

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՃԱՐՍՆԵՒՈՐՆԵՐ, ՃԱՋԻ ՎԱՐԴԵՐԵՍ ԱՂԱ, ՆՈՐ  
ՖԵՍԱՆ՝ ՖԻՐԱՆ, ՆՈՐ ՀԱՐՈԾ՝ ՊԱՑԱՆ, ՏԵՐ ՍՄԲԱՏ ՔԱՀԱ-  
ՆԱՅ, ՍՊԱՍՈՒՀԻՆ ՄԱՐԻԱՄ, ԿԵՐԱՑԱՅՐԸ, ՆԹԻԱԴԱՇՈՒՆԵՐ,  
ԿՐԳԻՉ ԿԻՆԵՐ, ՃԱՐՍԻ ՔՈՒՐԵՐ ԵՒ ՃՐԱԿԻՐՆԵԱԼՆԵՐ

(Հաս վաղեմի Ակնիցիական սովորութեան, կմիահօր ձեռիլ կը  
զտեռի րուր մը՝ կորին կապուած ձեւնակ ցիվրեռվ. Առ փե-  
սային կարևիր վեսի վայ աղամանակուու մանեակ մը՝ ճղադ  
եւ կամ խոյու զարդուի մը — զեւելուած է՝ ի նշան փեսա-  
յուրեան. հարսը հազած է համակ կարևիր եւ ոսկեհուու բան-  
ուածուու պարեզս մը մեջը պարսկական շալ զօհ մը կա-  
պած եւ հազած է նաև վրային կարա մուշտակ (կոճիկ իիրի),  
զմուն վրայ ձգուած է կարևիր շղարշ մը՝ ոսկեհուու եւ զող-  
շողուն. որ մինչեւ կես մեջը վշած պետք է լլայ. Առ հարս  
ու վեսայ հախապես պատրաստուած բարձր գահաւորակի մը  
վրայ բոլ բոլի կը նստին:)

ԳՈՂԱԲ.— Մէջէր աս հարսնիքը պաշխասին համար է  
եղեր. օ՛խ եղաւ Միրիկ, հէլ ինծի չեղաւ նէ քեզի ալ չե-  
ղա՞ւ եա. օ՛խ, օ՛խ...

Միթիկ. — (Այսովու համար աղախն ուղղելով) Քուկին լախըստըդ ասա՞նկ էր, մերին ըրած օյինդ սանքիմ վայլում պան մըն էր... Կ'ուզե՞ն քիմ աս հարսնիքը տակը վրան տառցունեմ տէ փառափ մը ըլլայ... կիտես եա՛ մեզի պէ՞մ մարդուն շախա ըլլապը...»

ՏիրԱՆ. — (Ընդմիջելով) Հաճի աղա, որովհետև Տիկին Գոհարն ու պարոն Միրիկը մեր պատուական զրացիներն ու սրտակից բարեկամներն են. փափաքելի չէ անշուշտ որ ասանկ ուրախառիթ օր մը անոնք տիսուր կացութեան մը մատնուին. ներեցէք որ ես իմ կողմէ իր անկեղծ սրտի արտայայտութիւն՝ անձնական քսակէս նուիրեմ պարոն Միրիկի յիսուն օսմ. ոսկի, միանգամայն առաջարկելով որ այս տան սպասուհնն Մարիամ, որ տարագրեալ Պարտիզակցի որբ հայուհի մըն է, այսոր իսկ Պ. Միրիկին կնութեան տանք, և թող անոնք ալ մեզ հետ երջանիկ ըլլան. կ'ընդունի՞ս պարոն Միրիկ.

Միթիկ. — Վայրկեան մը խորհնելի յետոյ կը մօտենայ Տիրանին եւ կը համբուրու անոր հակառը Եաշա՛ պէ ախպարըմ, ես քենէ ունմիւ չէի ըլլար, քանի քի տուն մինասիպ կը տեսնաս կոր նէ ես ալ խալու ըրի. ես պօյէս շատ վեր եղայ, Հաճի աղային աղջիկը քեզի կը վտյէր. ան իմին այսարս չէր ու իմին տունիս մէջը ըռահաթ չընէր պիտոռ, իմ խըսժէթս, իմ այսար Մառեամն է:

ՏիրԱՆ. — (Միրիկին ուսւը ծեծելով) Ապրին հայ խոնարհ դասակարգի իմ կտրիծ եղբայրներս:

ՀԱՃԻ ԱՂԱ. — Ապրի՞ք դաւակներս, պէրխուտար լընիք ու մէկ բարձի վրայ ծերանաք, ծլիք ու ծաղկիք. Ասված մէկ օրերնիդ հաղար անէ. Հայր Սրբահամու պէրէքէթը քէսանիդ լըցուի. չի բանիք ու ապրիք. չոր քարն երթաք կանաչ գաք. ֆող բռնեք վօսկի դառնայ. զօրանտք. Ասված էսէմէկ զավաւ չի տայ ու տիւշման չի խնտացնէ. հարզի պէտէլ լընիք օղոււ, ախ ու վախ չըսեք, աս գոռս բաց ու օճախս շեն պահեք:

Տէ՛Ր ՍԲՄԲԱԾ. — Ամէն, զոր ի՞նչ խնդրեսցես եղացի եւ կատարեսցի՝ անուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբայ, և կարձեալ տամ տանուտէրոջն Հաճի Վարդերես աղափ գիրա-

մանն Աստուածային զիսպատկեսցի և ասցէ ի կնութեան Գոհար տիկինն և եղիցին երկոքեան ի մարմին մի: (Կը միացնէ Գոհարի եւ Հաճի աղայի զրուխները. կնիահայրը նոյն պահուն րուրը պատեանեկի բաշերով րուրն ու պատեանը խայաձեւ կը դնեն անոնց գլխաւն վրայ. Գոհար կը կոյսէ ոտքը հաճի աղախն ոտքին վրայ, իսկ Հաճի աղան անմիջապէս շտկուիրով ու խայլ մը եւ երաղով)

ՀՅԱՃԻ ԱՂԱ. — Տէր պապա՛, գօղտիւկ պսակ կ'անես գիտնալս. Փախաթի իս նայէ ուր ըսիմ. իմ տարիս վացցուն է ու ես էնմէն փառքը վայլեր իմ. կարգուիլը ասկից եքքը ինծի հըմար չէ. ձուհար խաթիւնը խելքը գլոխը քեյվանի կնիկ է, վէվ ալ իւր առնէ նը չի խարուիր. մեր կիրակոս աղբարը քի չարքաշ ու խելօքիկ մարդիւկ մին է, միքքս դրի ուր տան զուան տէր անիմ ու մարդիւ սըրա օնցնիմ, էկէր քի ուր ձուհար տուտուն մինասիպ կու տեսնէ նը աս օրուընէ թեզը չի կայ, երկուքին զլօխները իրարու կու կապինքը իշ կ'ըսես, ձուհար խաթիւն, խապուլ կ'անե՞ս իմ աս խավէլ ու խարէրս, կու պագնես ու ձայտիդ կու դնե՞ս:

ԳՈՀԱՐ. — (Այժերը գետին յառած եւ մեղմ ձայնով մը) Ասված պապախն կամեցած խըսմէթը գլխուս վրայ: (Հաճի աղան կիրակոսին թերին բռներով կը թերէ Գոհարին մօս):

Տ. ՍՄԲԱԾ. — Եղիցի և եղիցի, կատարեսցի և պատկեսցի:

ԿԻՐԱԿՈՍ. — Քիւլահըմ մեր կաֆախն անցուցին, ամազարար չի քեայ. իսա թաթիլի քիւլահ ի, քապուլ արեցի:

ՏիրԱՆ. — Երեք հարսնիք մէկ յարկի մէջ. ահա վեն եւ աքանչելի կարդագրութիւն մը. այլապէս չէ կարելի դարձանչել հայ ազգին անհամար կորուստը, այսպէս պէտք են ըլլալ բոլոր հայ տուներու մէջ ամուսնութիւնները: իւրաքանչիւր տունի մէջ երկերկու, երեքական և նոյնիսկ աւելի պսակներ կատարուելու են, որ շուտով վերականգնի ծլի ու ծաղկի նորաբողբոջ մանուկ Հայաստանը: Ինչպէս նաև մեր ամէնուս սրտին մէջ անհնջնելի թող մնայ այս օրուան յիշատակը որ կը խորհրդանչէ Պոլսեցիի և գրուցիի անխտականութիւնը, եղբայրակցութիւնն եւ համերաշխութիւնը: (Օղիի ափսէին մօսենալով գաւար մը կ'առնէ եւ ներշնչուած):

Օ՞ն խմենք մենք եղբայրաբար,  
Խմենք ողին այս զուարթարար.  
Քէն, ոխ, խոպառ անհետին.  
Ժպտի թշուառն ալ յետին:

(Կողմող աղբար բորու ներկաներուն օդի կուտայ՝ ափսէն պտցուներով, երբ նոր փեսաները կը խմեն իրենց ըմպելին, բեկին վրայ գտնուողներ կը բաղին զաւարեն ու պնակները եւ ուրանուրեակ ժխորներ կը հանեն, տերերը սեղաննեն զրովն անցած կ'ուտի և կը խմե անընդհատ):

ՀԱՅՈՒ Ա.Պ. (Ազգեւորուած՝ կը խօսի նետեւեալ խրատականը) Խրատը լընի քեզի պարիւն Միրիկ, ասկից եքքը տընամարդիւն մի նշանածին, կնկանը, փարախն, մալին ու միւլքին աշկը չի տնկես. դիւն փարախն թէքին ու չփթին չի նայեցար ու հարիւր իցցուն հատ կարմիր լիրա համբեցիր քի աղջինկո նշանածէն ետ անիմ ու քեզի տամ, ես օտար մարդ մին էյի: շատ աղէկ ըսի ու փարաներդ ձեռքէդ առի, մենք Ակնցի ինք, սատընին փօթին գալօշը ճիվերէն կու հանինք ու անոր տեղը չարուխ կու հագցընինք, էնմէն պույուխու մարդ հարըտ զաննը մի աներ. իշթէ աշքովըդ տեսար քի մարըտ կարգեցի իր փարաովը, ու քեզ ալ կարգեցի քու փարաովդ. ասոր Ակնցի հիսապ կ'ըսին տղա ս, մենք հիսապսուզ բան չինք աներ, մեր կօխած էնմէն քալը հիսապով է, գործի մեջ հինք փարան կու փըտընինք. անիւն վաստեկելիւ հըմար հինկ հազորը չինք փըտըներ. կու վաստը կինք խարճնելիւ համար, ու կու խարճնինք վաստըկեցիւ հըմար. պարիւն Տիրանը քեզի իցցուն լիրա զախշիշ արաւ. էկէր քի ուր խօս կուտաս ըրախիէն վազ գալիւ ու թուլումպածիութիւնը թէրք անելիւ նը հարուր հատ կարմիր միրա ալ ես պախչիշ տի անիմ կիրակոսին ու քեզի հըմար. հարսնիքէն եքքը հարուր իցցուն էիրաով փառլախ ախթէրի խանիւթ մի կու բոնէք ու կիրակոս աղբօրը հետ ձեռքի տուած կ'իյնաք կ'ելլէք, փարա կու վաստիքը ու մարդ կ'ուլլիք:

(Միրիկ կը համբուրէ Համի աղային ձեռլը. կը համբուրէն անեւ Տիրան, կիրակոս, Գոհար և Մարիամ կարգաւ. անեն վեցը նոր հարա Պայծառը կը բերեն երկու հարսկուրեր)

թեւերը մտած եւ կը կայնեցնեն Համի աղային առջեւ, որ Ակնցիներու հինաւուրց սովորութեան հաւանայն կայնած տեղին ծանր ծանր կ'իշնայ զետին եւ կըուզ ընեղով կը համբուրէ անու ձեռլը. այն ատեն Համի աղայն գրապնեն ափով մանր դրան կը բափէ հարսին զիսուն վրայ. թեւեն վրայ գտնուող հրաւերալներուն կընեւ ու տղամարդ կ'աւանի գանուած մանր դրամը մեկզմէկ հրաւերակուրքանը. ապա կը սկսի բուն հարսնիքը. ներկայները նուազի ընկերակցուրեանը կը սկսի երգել «Բարի տու աղուոր բարի տու» եւին. իւրաբանցիւր տողը նախ այրելը եւ ապա կիները կ'երգեն փոխն ի փոխն. յետոյ կ'երգեն Գնափի երգը՝ պարեզով. ապա կ'երգեն «Եկուր աղուոր աղջիկը եւ դեռ ուրիշներ»:)

ԵՐԳ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ (\*)  
ԳՈՎՔ ՀԱՐՍԻՆ

Բարի լուս աղուոր բարի լուս,/  
Բարի լուսդւն բարին վրադ,  
Ուր ցաթէ արեւն ի վրադ.  
Փամեն կուգան ջուխտ մը ֆիտան,  
Ելլինք տեսնինք մերը կուգան  
Առնինք ելլինք վերի օաան  
Այ իմ հայ աննման աղուոր  
Զիկայ քեզի նման աղուոր  
Երկու կաքուուկ արինք բունը,  
Կու կաթէ երեսին գունը.  
Դիւն ես մեր տանն ոսկի սունը.  
Աղուոր քեզ որ մար է բերեր,  
Անթուիս աջուի մարն է բերեր  
Մարն է բերեր մեզի հըմար.  
Մենք ինք եկեր քեզի հըմար,  
Քեզ տի տանինք մեզի հըմար.  
Այ իմ հայ Աննման և այլն.

Առաւոտուն կանուխ կանուխ,  
Հարսինը սիրան է պուլանուխ.

[\*] Երբ զերակատարներուն անծանօթ են Ակնայ հարսանեկան երգերու եղանակները, կարելի է զանց առնել, պարմանա որ նայկական պարով մը փակա փ փարազոյրը.

Երթանք պաղջան քաղինք անուխ .  
Առաւոտուն աս որ չաղէ ,  
Հարսն ի պաղջան վարդ կու քաղէ ,  
Նստեր ու շեքէր կու մաղէ .  
Շեքրին թօգն ալ ինք կու թաղէ .  
Այ իմ հայ աննման աղուոր . ևն .  
Դիւն ուր ելիր ուր իս գտար .  
Հայ Աղամայ պաղջաս մտար .  
Պիւլիւլ էղար վարդիս դիմաց .  
Վարդս տարիր չարիր իմաց .  
Աղուոր նաղերով նաղերով .  
Դուն ես առմա թէլ մաղերով ,  
Նազ արէ նաղըդ վերցնիմ .  
Զուր ուզէ գինի խմցնեմ .  
Այ իմ հայ աննման աղուոր . ևն .  
Օրդեր խաղաղ մու թօրայ ,  
Թագաւերին ձին կու խաղայ .  
Հարսին ալ սիրտը կու դողայ ,  
Թագուորի մար դիւն դիւրս եկու ,  
Թագուոր Որդեկրդ եկեր է .  
Թէք զնացեր ջուխ եկեր է ,  
Ալուկ հարսնուկն հետ բերեր է ,  
Այ իմ հայ աննման աղուոր . ևն .  
Աղուոր քու հազածդ ալ է ,  
Ելիր խալուն վրան քալէ .  
Քալէ ու մանուրտիկ քալէ  
Ալուկ փեշերդ վեր ծալէ :  
Այ իմ հայ աննման աղուոր . ևն :

ՀԻՆԱԿ ԵՐԳԸ (\*)

Հինան վարդէ ջրով շեղուած (իրկ.)  
Քէրամ արէ ձեռքունքդ բաց »

(\*) Նախուպէս հարսանեկան սեղանին վրայ զրուած պէտք է ըլլայ փորիկ յախճապակիէ պնակ մը , որուն մէջ լեցուած է բիշ մը զնա կամ անոր նմանող փոշի մը , բանի մը մեղրամում մէկզմէկու պլորուած պնակին կեղրոնը փոշիին մէջ միուած պիտի ըլլայ . երգուած պահուն պարողներէն երիցագոյնը աղ առ փոշին մէջ պիտի կրէ պնակը մոմը վառելէ յետոյ , որ պարի ընթացքին փոխն ի փոխ կը շրջի ամէնուն ալ ձեռքը :

Աս հինան անպես հինա չէ , (իրկ)  
Խըրկողն ալ ինչ աղուոր մանչ է . »  
Ասօր հոս է վազը կօչէ : »

ՀԻՆԱԿ ՀԱՐՍԻՆ

Եկուր աղուոր աղջիկ հարս էղար մեղի ,  
Եախութ , զմմրութ , անգին քար էղար մեղի ,  
Եկուր աղուոր աղջիկ եկեր ինք ձերը .  
Քեզ հաղար նաղերով տի տանինք մերը .  
Եկեր ենք տի տանինք մեծերդ լացու .  
Խաթով լաթ ինք բերեր կանակըդ օնցու ,  
Ատքդ խատէմլիւ է գիւն մեզ ինդացու .  
Մի լար աղուոր աղջիկ արցունքիդ մեղէ է :

ԵՐԳ՝ ԵԱՐԻՆ ՓԱՓԱՔԸ

(ԱԼԵԱ ԿԷԶԼԻՒ)

Ի՞նչ աղուոր է բացուեր վարդիս թերթերը ,  
Կրակով լեցուցիր սրտիս խորերը .  
Գրէ ու ուղարկէ սրտիդ սէրերը ,  
Աննման աղուոր ես չի կայ նմանըդ :

Գիշեր ցորեկ հիշ չես ելլար մտացըս .  
Գլուխս ուր բարձ դնիմ կուգաս երազս .  
Հարամ արիր կերածս ու խմածս .  
Աշխարհքին չիմ փոխեր սրտօք սիրածս :  
Հանէ ծոցեդ գըլիսես կըլըած սև մաղըս .  
Դիր քովը ու նայէ հիմակ խըրկածըս .  
Ան սեւ երկար երկար սիրուն մաղերըս ,  
Ճերմակի ին փոխեր քաշած օֆերը ,

Ճամբորդ կուգայ հինտ խումաշի բէռներ կան ,  
Արանիս ալ ի՞նչ ծովեր ու լէռներ կան .  
Տուն եկուր , տուն եկուր , եարըս տուն եկուր  
Արմազան չիմ ուղեր արեստ առ ւ'եկուր :

ՊԱՐ

ԵԿՈՒՐ ՄԵՐՆ ԵՐԹԱՆՅ  
Մուրատի եղբուցը քալելէն եկայ ,  
Ակինը պաղ ջուրը խմելէն եկայ ,  
Հայ աղջիկ , վարդ աղջիկ , եկուր մերն երթանք ,  
Բացուեր են վարդերը քաղէ մերն երթանք :

Տուր ձեռքդ ձեռքիս մէջ քալէ մերն երթանք,  
Յաթեր է լուսընկան տէ հատի երթանք.  
Հայ աղջիկ, վարդ աղջիկ, եկուր մերն երթանք,  
Ես քաղեմ վարդերդ շիտակ մերն երթանք:  
Կարելի ե նաև Անտոնի եւ այլ ակնցիական խաղեր երգել  
ինչպէս նաև զանազան հայկական պարեր պարել:

(Վարսպոյրը կը զոցուի արեւելեան պարով)

Վ Ե Ր Զ



Վ Բ Ի Պ Ա Կ

Առաջին էջին ԽՕՍՔ ՀԵՂԻՆԱԿԵՆԻ Ս. և Բ. տորդերը պի-  
տի ըլլան:

Ուժեղու համար ապրելու և  
եւ ապրելու համար խնդարու և


Արար Բ. Տեսիլ Ս. տող ՏՐԴ զիսիյնայ՝ պիտի ըլլայ գե-  
րեցնայ, տող 13րդ լամբնկու՝ պիտի ըլլայ ժամբնկու:

Էջ 20 տող 26 մոռցուած է՝ մարդս ձուհար տուտուն առ-  
նելին վաս արի մե՛կ նախադասութիւնը:

Արար Բ. Տեսիլ Բ. տող 21, բանրանան ու չաթրանան  
պիտի ըլլայ բանրանան ու զաթրանան:

Արար Դ. Տեսիլ Դ. տող 22 գոյնի պիտի ըլլայ իկոն  
աչյովի:





Ի ՄՈՏՈՅ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅ Յ.Յ.Յ-ՎՄՒՐԵՆՑԻ  
ՍՏՈՒԱՐ ՄԷԿ ԳՈՐԾԸ

# ՍԼՖԵՐԱՊԵՐԼԻԿԸ

## Եւ իր Արհաւիրքը

### ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԵԶ ՄԻԱԿԸ ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Ընդհակառ գործակալ թերթերու և գիրքերու, հրատա-  
րակիչ Նիք Քարմըրի, Նաթ Փինքէրթընի, Արսէն Լիւ-  
բէնի և Շերլօք Հոլմոփ:

Ամէն տեսակ գիրքեր, թերթեր ու հանդէսներ եւ  
օրը օրին նոր հրատարակութիւններ Պոչսոյ ամէն կող-  
մը կը վաճառուին իր Տասնաւոր ծախողներուն կողմէ:

Սկիւտար, Դատարգիւղ, Մաքրիգիւղ, Ասմաթիա,  
Գումզարու, Ելնիգարու, Վոսփորի կարեոր նաւա-  
մատոյցները կամուրջին երկու զլուիլը, և Բերայի,  
Շիշլիի և Կէտիկ փաշայի բոլոր ծխավաճառներուն քով

Նոյնպէս կը հայթայթէ եւ իր հասցէին կը հասցնէ  
ու է գիրք սրու մասին իրեն դիմում եղած ըլլայ:  
Հասցէ Պապ Ալի, Բէշիտ էֆ. իսան: Օրը 14 ժամ բաց է: